

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«25» սեպտեմբերի 2021թ.

ք. Կապան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ Գևորգ Գրիգորյանս ուսումնասիրելով «25» 09 2021թ. վերսկսված թիվ 01720203 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված ՍԴ/1445/02/15 կատարողական թերթի համաձայն պետք է Արա Հարությունյանից, Վրեժ Գրիգորյանից և Գևորգ Մարտիրոսյանից համապարտությամբ հոգուտ «Կամուրջ ՈւՎԿ» ՓԲԸ-ի բռնագանձել 3.828.117 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.01.2021թ-ին տրված թիվ ՍԴ/0306/02/17 կատարողական թերթի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքում 15.01.2021թ-ին վերսկսված թիվ 01720203 կատարողական վարույթով պետք է Արա Հարությունյանին, Մելանյա Ավետիսյանին, Մանյա Հարությունյանին Գարեգին Հարությունյանին, Արթուր Հարությունյանին, Աշոտ Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Ծավ համայնքի Շիշկերտ գյուղում գտնվող թիվ 1 փողոցի թիվ 5 հասցեում 201.2քմ բնակելի տունը և 1017քմ մակերեսով տնամերձ հողատարածքը /վկայական թիվ 217712/, 52քմ հողատարածքը /վկայական թիվ 2177174/, 165քմ տնամերձ հողատարածքը /վկայական թիվ 2177175/, 387քմ տնամերձ հողատարածքում առկա 61.5 գոմը /վկայական թիվ 2268612/, 506քմ հողատարածքը /վկայական թիվ 2268613/, 1402քմ գյուղ նշանակության հողամասը /վկայական թիվ 2177180/, 833քմ գյուղ նշանակության վարելահողը /վկայական թիվ 2177182/, 777քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177176/, 3197քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177178/, 2912քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177185/, 3082քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177184/, վաճառել հրապարակային սակարկություններով, ստացված գումարը հետագայում բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցներ Արա Հարությունյանի, Մելանյա Ավետիսյանի, Մանյա Հարությունյանի Գարեգին Հարությունյանի, Արթուր Հարությունյանի և Աշոտ Հարությունյանի միջև յուրաքանչյուրին գումարի 1/6-ի չափով: Մանյա Հարությունյանի 1/6-րդ բաժնեմասի գումարը թողնել Հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվում մինչև նրա ժառանգության ձևակերպումը:

Արա Հարությունյանին, Մելանյա Ավետիսյանին, Մանյա Հարությունյանին Գարեգին Հարությունյանին, Արթուր Հարությունյանին, Աշոտ Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Ծավ համայնքի Շիշկերտ գյուղում գտնվող 1624քմ գյուղ նշանակության վարելահողից /վկայական թիվ 2177177/, 5577քմ գյուղ նշանակության վարելահողից /վկայական թիվ 2177179/, 1269քմ գյուղ նշանակության վարելահողից /վկայական թիվ 2177181/, 7672քմ գյուղ նշանակության խոտհարքից /վկայական թիվ 2177183/, 5646քմ գյուղ նշանակության խոտհարքից /վկայական թիվ 2177187/ բնեղենով առանձնացնել Արա Հարությունյանի 1/6-րդ բաժնեմասը՝ «Վարմուն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից 17.01.2019թ-ի «305-01/Վ-018» փորձագետի եզրակացության

Կատարողական գործողությունների արդյունքում վերը նշված գույքերի գնահատման նպատակով նշանակվել է փորձաքննություն: Համաձայն փորձաքննության եզրակացության պարտապան Արա Հարությունյանին պատկանող 1/6 բաժնեմասերի շուկայական արժեքը կազմում է 375.834 ՀՀ դրամ: 01.09.2021թ-ի դրությամբ պարտապանի պարտավորության չափը կազմում է 10.465,31 ԱՄՆ դոլար և 80.000 ՀՀ դրամ:

Կատարողական վարույթներով վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանին պատկանող գույքերի և դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքերն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի և ավելի չափով բավարար չեն պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել «25» 09 2021թ. վերսկսված թիվ 01720203 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90 -օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով :

**ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ**



Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ